առաջարկեց ծունկի գալ ի յարգանս Հայաստանի ազատութեան զոհերի։ Զօրքը և բազմահազար բազմութիւնը մի մարդու պէս լուռ իջան ծունկի։ Ապա զօրքն ու հասարակութիւնը, նուագով, դիմեց դէպի Խորհրդարան, ուր, պատշգամբից, յուզած խօսք ասաց Նախագահ Ա. Սահակեանը։ Այստեղից, բազմութիւնը շարժուեց դէպի կառավարութեան շէնքը և խանդավառ ցոյցեր արաւ։ Վարչապետ Ա. Խատիսեանի ճառի միջոցին թնդանօթները աւետեցին ժողովրդին ուրախ լուրը։

Այնուհետև, զօրքը — ձիաւոր ու հետևակ — նուագախմբի ուղեկցութեամբ հանդիսաւոր շքերթով անցաւ Երևանի փողոցներով՝ ժողովրդի ցնծագին ծափահարութիւնների տակ։ Քաղաքն ընդունել էր տօնական կերպարանք։ Տներն ու խանութները զարդարուած էին դրօշակներով ու զորդերով։ Երեկոյեան եղաւ հրավառութիւն, իսկ կայարանից «Ազատամարտ» զրահագնացքը լուսաւորում էր քաղաքը։

Ամբողջ օր, մինչև ուշ գիշեր, մայրաքաղաքը տենդագին վիճակի մէջ էր։ Երկրի զանազան կողմերից և արտասահմանից տեղում էին շնորհաւորական հեռագրեր։ Հեռագրեր ստացուեցին և օտար պետութեանց Անդրկովկասի ներկայացուցիչներից, Վրաստանի և Ադրբէջանի խորհրդարաններից ու կառավարութիւններից։ Համաժողովրդական ցոյցեր ու հանդէսներ եղան և դաւառում։ Մասնաւորապէս շքեղ էր հանդէսը Կարսում, յուն. 24-ին, ուր տեղի ունեցաւ համաժողովրդական միտինգ ու զօրահանդէս։ Անկեղծ ու անբռնադրօսիկ խանդավառութեամբ էր տօնում ժողովուրդը իր անկախութեան ճանաչումը։

Ցունուար 26-ին Երևանում դումարուեց Արհեստակցական Միութեան Խորհրդի անդրանիկ նիստը մասնակցութեամբ 13 միութեանց 38 ներկայացուցիչների—կօօպերատիւների, աւտոբաժնի, դեղագործների, ուսուցչական միութեան, փոստ-հեռագրական պաշտօնեաների, քաղաքային ինքնավարութեան ծառայողների, բանկային ծառայողների, կաշի գործարանի աշխատաւորների, երկաթուղային բանուորների, ջուլհականոցի, տպագրական բանուորների, հացթուխների և որբանոցների ծառայողների միութիւնների։

Ժողովը քննեց ու վաւերացրեց Միութեան կանոնադրութիւնը և ընտրեց Միութեան գործադիր մարմին, որի մէջ մտան Աղաջանեան Ա., Մուշեղեան Տ., Պոպով, Աբգարեան Մ., բժ. Նազարեան Բ., Վարդիկեան Ս., Տէր-Զաքարեան Գ. և Հախվերդեան Ա.։

Ժողովի զբաղումի առարկայ եղաւ նաև Հայաստանի դէ ֆակտո ճանաչումը։ Ընդունուեց մի բանաձև, որի մէջ արտայայտւում էր հայ աշխատաւորութեան վերաբերումը. «Միութիւնների Միութեան անդրանիկ խորհուրդը, ասում էր բանաձևը, ողջունում է հայ աշխատաւորութեան և նրա կառավարութեան այս յաղթանակի համար, որը յաղթանակի մի քայլ է հայ քաղաքական ազատագրութեան տեսակէտից։ Միութիւնների Միութեան Խորհուրդը հաւատում է, որ Հայաստանի կառավարութիւնը թոյլ չի տայ, որ ստացած ազատութիւնը ծառայէ որևէ իմպերիալիստական պետութեան շահերին և Հայաստանի պետական նաւը կը տանէ դէպի Հայաստանի աշխատաւորութեան բարօրութիւնն ու սոցիալիստական նոր